

Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ
«ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔ»-Ի ՍՏԵՂԾՄԱՆ

I. ՄՇԱԿՈՂ ՄԱՐՄԻՆ

1. «Ինժեներական քաղաք»-ի ստեղծման հայեցակարգը (այսուհետ՝ հայեցակարգ) մշակվել է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից:

II. ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

2. Հայեցակարգը մշակվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N122-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի 23-րդ կետով նախատեսված միջոցառման կատարման շրջանակներում:

3. «Ինժեներական քաղաք»-ի ստեղծման հայեցակարգի հիմնական նպատակն է Հայաստանում ինժեներական քաղաքի հիմնման միջոցով նպաստել Հայաստանում ինժեներական և բարձր տեխնոլոգիաների (այսուհետ՝ ԻԲՏ) ոլորտի հետագա զարգացմանը՝ խթանելով Հայաստանում տնտեսության մրցունակության և արտադրողականության մակարդակի բարձրացումը:

4. Ինժեներական քաղաքը նախագծված է այնպես, որ մեկ վայրում տեղակայվեն և կենտրոնացվեն ԻԲՏ ոլորտի ընկերությունները/հաստատությունները:

5. «Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի հիմնական նպատակն է Հայաստանը դարձնել ինժեներական և բարձր տեխնոլոգիական արտադրանքի և ծառայությունների՝ գլոբալ շուկաներ արտահանող երկիր, ինչպես նաև տարածաշրջանային հանգույց ինովացիոն ինժեներական և բարձր տեխնոլոգիական լուծումների համար:

III. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

6. «Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագիրն իրականացվելու է պետություն-մասնավոր համագործակցությամբ:

7. Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է ստեղծել ինովացիոն էկոհամակարգ, որտեղ ԻԲՏ ոլորտի ընկերություններն արդիական ենթակառուցվածքների կիրառմամբ կմշակեն և կիրազորեն նորարարական գաղափարներ՝ տեղական ու միջազգային շուկաներում բարդ տեխնոլոգիական լուծումների առաջադրման նպատակով:

8. «Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագիրը բաղկացած է 2 հիմնական բաղադրիչներից՝ ենթակառուցվածքային և բովանդակային: Առաջին բաղադրիչի ներքո նախատեսվում է ստեղծել արդիական ենթակառուցվածք՝ բաղկացած Ինժեներական բիզնես արքստրապոլիսից և Համատեղ աշխատանքային տարածքից, Ինժեներական կենտրոնից, Ինժեներական քաղաքում տեղակայվելիք 35-40 ընկերությունների շենքերից: Երկրորդ բաղադրիչը ներառում է 3 ուղղություն՝

1) լաբորատորիաների, արհեստանոցի և փոքր չափաքանակներով նմուշային արտադրության արտադրամասի ծրագիր (համատեղ օգտագործման լաբորատորիաներ):

2) արքստրապոլիսի ենթակառուցվածքի ծրագիր (նորաստեղծ ընկերությունների ժամանակավոր ինկուբացիա, թրեյնինգներ, մենթորություն):

3) «Համակարգերի ճարտարագիտություն» բազային ամբիոն՝ իր ուսումնական ծրագրերով, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի կազմում:

9. Ինժեներական բիզնես արքելերատորը և Համատեղ աշխատանքային տարածքը կունենան արքելերացիոն և ինկուբացիոն գործունեության համար նախատեսված սարքավորումներ, սկսնակների համար փոքր գրասենյակային տարածքներ, թիմերի համար համատեղ աշխատանքային տարածք, վարչական տարածք՝ ղեկավար կազմի և տեխնիկական անձնակազմի համար, հանդիպումների սրահներ, համագումարների դահլիճ, դասընթացների սենյակներ և համատեղ օգտագործման լաբորատորիաներ:

10. Ինժեներական քաղաքը ստեղծելու նպատակով ընտրվել է Բագրևանդ փողոցի 3.0 հա մակերեսով հողամասը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված հողամասից ոչ հեռու գտնվող տարածքում ճարտարագիտության ոլորտում գործող մասնավոր ընկերությունների կողմից արդեն իսկ կառուցվել են Ինժեներական կենտրոնը, Ինժեներական գրադարանը, Տիեզերքի ու Գիտության և տեխնոլոգիաների թանգարանները: Ընտրված տարածքն առանցքային նշանակություն ունի «Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի դրական արդյունքների ապահովման համար: Այն թույլ կտա մեկ վայրում համախմբել ինժեներական էկոհամակարգի հիմնական մասնակիցներին: Հայաստանի Հանրապետության կառավարությունը, մեծապես կարևորելով վերոնշյալ հանգամանքը, կձեռնարկի անհրաժեշտ միջոցները ընտրված տարածքում «Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի իրականացման համար:

11. Նախատեսվում է ծրագրի շրջանակում հիմնել «Ինժեներական քաղաք»-ի հիմնադրամ, որը հանդիսանալով շահույթ չհետապնդող իրավաբանական անձ՝ պատասխանատու կլինի Ինժեներական քաղաքի ենթակառուցվածքների, արքելերացիայի և կրթական ծրագրերի, ռեզիդենտների կողմից Ինժեներական քաղաքի պայմանների և

կանոնների պահպանության համար, սահմանված կարգով կիրականացնի մշտադիտարկում, կորոշի Ինժեներական քաղաքի ռեզիդենտների ու ինժեներական արտելերատորի ռեզիդենտների վարձավճարների չափը: Նախատեսվում է նաև ձևավորել հավաստագրման հանձնաժողով, որը կքննարկի Ինժեներական քաղաքում հողակտորների հատկացման, ռեզիդենտի կարգավիճակ ստանալու նպատակով ներկայացված հայտերը և կկայացնի որոշումներ՝ հայտերը բավարարելու կամ մերժելու մասին:

IV. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

12. «Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի վերաբերյալ շնորհանդեսն առաջին անգամ «Նեյշնլ Ինսթրումենթս» ընկերության կողմից 2013 թվականին ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն՝ որպես պետական-մասնավոր գործընկերության նախաձեռնություն: Ծրագիրը հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կողմից:

13. Այնուհետև Հայաստանի Հանրապետության վարչապետի մոտ կազմակերպվել է քննարկում՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ, որի ընթացքում ներկայացվել է Ինժեներական քաղաքի ստեղծման ծրագիրը՝ արժանանալով Հայաստանի Հանրապետության վարչապետի հավանությանը:

14. «Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագիրը 2014 թվականին ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Նախագահին՝ Նյու Յորքում կայացած «ԱրմԹեք» Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտի գլոբալ համաժողովի շրջանակում, որի արդյունքում ծրագիրը հավանության է արժանացել նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից, և հանձնարարվել է ապահովել ծրագրի իրականացումը: Այս ուղղությամբ, ծրագրի իրականացման վերաբերյալ առանձին դրույթներ են ամրագրվել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրերով:

V. ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

15. Հիմնական խնդիրներն են՝

1) ԻԲՏ ոլորտի ընկերությունների աճը խթանելու համար անհրաժեշտ ժամանակակից ենթակառուցվածքների ստեղծումը և զարգացումը.

2) ԻԲՏ ոլորտում հետազոտությունների և մշակումների (R&D) իրականացման համար նպաստավոր միջավայրի ստեղծումը.

3) ԻԲՏ ոլորտի նորարարական գաղափարների աքսելերացիայի և առևտրայնացման համար արդյունավետ մեխանիզմների ձևավորումը.

4) ԻԲՏ ոլորտի սկսնակ ընկերությունների ձևավորմանն աջակցությունը.

5) շուկայի պահանջարկին համապատասխան ԻԲՏ ոլորտի որակյալ մասնագետների առկայության ապահովումը:

16. Հիմնական նպատակներն են՝

1) Հայաստանում ձևավորել Ինժեներական կլաստեր՝ աջակցելով ԻԲՏ ոլորտի ընկերությունների միջև ցանցային համագործակցությանն ու նպաստելով համատեղ արտադրության/լաբորատորիաների գործարկմանը.

2) խթանել ԻԲՏ ոլորտում ներդրումների ներգրավումը, ինժեներական և բարձր տեխնոլոգիական նոր ընկերությունների և աշխատատեղերի ստեղծումը.

3) Հայաստանի ԻԲՏ ոլորտի ընկերությունների համար ստեղծել ինովացիոն ենթակառուցվածք՝ համալրված արդիական սարքավորումներով, ընդհանուր լոգիստիկ համակարգով և ծրագրերով, ինչը հնարավորություն կտա ԻԲՏ ոլորտի ընկերություններին իրենց տեխնոլոգիական լուծումների մշակման համար կիրառել ժամանակակից գործիքներ և սարքավորումներ.

4) խթանել ԻԲՏ ոլորտի որակյալ մասնագետների պատրաստումն ու վերապատրաստումը:

VI. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

17. «Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները/գործողությունները.

1) Ենթակառուցվածքների ստեղծում և տարածքի բարելավում, այդ թվում՝ ճանապարհների, մայրճերերի, կանաչապատ տարածքների բարեկարգում, ցանկապատում, ճանապարհային լուսավորության, ջրի, գազի, էլեկտրականության, ինտերնետային կապի համակարգերի ապահովում.

2) Ինժեներական բիզնես արքսելերատորի, Համատեղ աշխատանքային տարածքի, Ինժեներական քաղաքում տեղակայվելիք 35-40 ընկերությունների շենքերի նախագծում և կառուցում.

3) Ինժեներական քաղաքի շենքերի, այդ թվում՝ Ինժեներական կենտրոնի, Ինժեներական բիզնես արքսելերատորի, Համատեղ աշխատանքային տարածքի, ընդհանուր օգտագործման տարածքների կահավորում և սարքավորումներով հագեցում (չափման լաբորատորիա, էլեկտրոնիկայի արտադրության գիծ, ինժեներական ապարատների արտադրության լաբորատորիա, արհեստանոց և այլն).

4) Ինժեներական քաղաքի կառավարման մարմինների ձևավորում.

5) Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի կազմում Ինժեներական քաղաքում «Համակարգերի ճարտարագիտություն» բազային ամբիոնի հիմնում.

6) ԻԲՏ ոլորտի սկսնակների համար արքսելերացիոն ծրագրի մշակում և իրականացում.

7) Ինժեներական քաղաքում ԻԲՏ ոլորտի մասնագետների համար դասընթացների կազմակերպում և անցկացում, դասընթացավարների կարողությունների բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում.

8) ցանցային միջոցառումների, մրցույթների, վենչուրային համաժողովների կազմակերպում և այլն:

VII. ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

18. Ինժեներական քաղաքի ստեղծումը տնտեսական և սոցիալական ազդեցություն կունենա ԻԲՏ ոլորտի վրա: Մեկ վայրում ինժեներների և բարձր տեխնոլոգիական որակյալ մասնագետների համախմբումը կնպաստի օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, գիտելիքների և փորձի փոխանակմանը, նորարար գաղափարների գեներացմանը, սկսնակ ընկերությունների և աշխատատեղերի ստեղծմանը, միջազգային և տեղական շուկաներում տեխնոլոգիական լուծումների առաջադրմանը՝ բարձրացնելով Հայաստանի տնտեսության մրցունակությունն ու խթանելով տնտեսական աճը:

19. «Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի իրականացման արդյունքում կանխատեսվում է ԻԲՏ ոլորտի 1500 բարձրակարգ մասնագետների պատրաստում և վերապատրաստում, 2000 նոր աշխատատեղերի ստեղծում, առնվազն 20 նորաստեղծ կազմակերպությունների հիմնում, 40%-ով կազմակերպությունների արդյունավետության բարձրացում, 30%-ով արտահանման ծավալների աճ:

VIII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

20. «Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի իրականացման համար նախատեսվում է մոտ 21.2 մլն ԱՄՆ դոլարի չափով ներդրում, ընդ որում՝ ընդհանուր

ծախսերի 50%-ը (մինչև 10.5 մլն ԱՄՆ դոլար) նախատեսվում է համաֆինանսավորել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ Համաշխարհային բանկի «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքներ» վարկային ծրագրի միջոցով, մնացած 50%-ը՝ «Նեյշնլ Ինսթրումենթս»-ի և կոնսորցիումի /ներառում է «Նեյշնլ Ինսթրումենթս ԷյԷմ» ընկերության կողմից ծրագրի շուրջ համախմբված 14 ինժեներական ընկերություններ/ կողմից: Նախատեսվում է, որ ծրագիրն ինքնաձախսածածկ կդառնա գործունեության 4-րդ տարում:

IX. ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

21. Հայեցակարգի ընդունումը էապես կնպաստի ԻԲՏ ոլորտի արդիական ենթակառուցվածքների ձևավորմանը, ոլորտի նոր ընկերությունների և աշխատատեղերի ստեղծմանը, բարձրորակ մասնագետների պատրաստմանն ու վերապատրաստմանը, ինժեներական և բարձր տեխնոլոգիական արտադրանքի ու ծառայությունների արտահանմանը՝ խթանելով Հայաստանում ԻԲՏ ոլորտի և, ընդհանուր առմամբ, տնտեսության զարգացումը:

Հավելված N 2
 ՀՀ կառավարության 2018 թ.
 մարտի 1-ի նիստի N 8
 արձանագրային որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

«ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔ»-Ի ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու մարմինը	Ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
1.	«Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի շրջանակում ամբողջական առաջարկի հաստատում	Համաշխարհային բանկի ընթացակարգերին համապատասխան ընտրված ամբողջական առաջարկի առկայություն	Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի իրականացման ղեկավար հանձնաժողով (համաձայնությամբ)	2018 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
2.	Հավաստագրման հանձնաժողովի ստեղծում	Ինժեներական քաղաքում ռեզիդենտի կարգավիճակ ստանալու համար ներկայացված հայտերի քննարկման և որոշումների կայացման լիազորություններ ունեցող հավաստագրման հանձնաժողովի առկայություն	<p>ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն</p> <p>ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն</p> <p>ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն</p>	2018 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:

			<p>«Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ)</p> <p>Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ (համաձայնությամբ)</p> <p>«Նեյշնլ Ինսթրումենթս» ընկերություն (համաձայնությամբ)</p>		
3.	«Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի իրականացման համար հողի սեփականության իրավունքի փոխանցում	«Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ հողի սեփականության իրավունքի առկայություն	<p>ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն</p> <p>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p>	2018 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
4.	«Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի իրականացման վերաբերյալ եռակողմ պայմանագրի բանակցում	«Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի իրականացման վերաբերյալ եռակողմ պայմանագրի կնքում	<p>ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկ (համաձայնությամբ)</p> <p>Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ (համաձայնությամբ)</p> <p>«Նեյշնլ Ինսթրումենթս» ընկերություն (համաձայնությամբ)</p>	2018 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	<p>Համաշխարհային բանկի «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիր» վարկային համաձայնագիր</p> <p>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ</p>

5.	«Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի շրջանակում հողի բարեկարգման աշխատանքների ճարտարապետական նախագծում	«Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի շրջանակում հողի բարեկարգման աշխատանքների ճարտարապետական նախագծի առկայության ապահովում	Մրցութային կարգով ընտրված կազմակերպություն (համաձայնությամբ)	2018 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Համաշխարհային բանկի «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիր» վարկային համաձայնագիր ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
6.	«Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի շրջանակում Ինժեներական բիզնես արքսելերատորի շենքի ճարտարապետական նախագծում	«Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի շրջանակում Ինժեներական բիզնես արքսելերատորի շենքի ճարտարապետական նախագծի առկայության ապահովում	Մրցութային կարգով ընտրված կազմակերպություն (համաձայնությամբ)	2018 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Համաշխարհային բանկի «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիր» վարկային համաձայնագիր ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
7.	«Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի շրջանակում հողի բարեկարգման աշխատանքների իրականացման համար շինարարական կազմակերպության ընտրություն և աշխատանքների մեկնարկ	«Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի շրջանակում հողի բարեկարգման աշխատանքների իրականացման համար շինարարական կազմակերպության առկայություն և աշխատանքների մեկնարկի ապահովում	Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի իրականացման ղեկավար հանձնաժողով (համաձայնությամբ) Մրցութային կարգով ընտրված կազմակերպություն (համաձայնությամբ)	2019 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	Համաշխարհային բանկի «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիր» վարկային համաձայնագիր ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ

8.	«Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի շրջանակում հողի բարեկարգման աշխատանքների իրականացում	«Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի շրջանակում հողի բարեկարգման աշխատանքների իրականացման ապահովում	Մրցութային կարգով ընտրված կազմակերպություն	2019 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Համաշխարհային բանկի «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիր» վարկային համաձայնագիր ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
9.	«Ինժեներական քաղաք» հիմնադրամի ստեղծում	«Ինժեներական քաղաք» հիմնադրամի ստեղծման համար անհրաժեշտ իրավական հիմքերի առկայության ապահովում	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ) Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ (համաձայնությամբ) «Նեյշնլ Ինսթրումենթս» ընկերություն (համաձայնությամբ)	2019 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Համաշխարհային բանկի «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիր» վարկային համաձայնագիր ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ

10.	«Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի շրջանակում Ինժեներական բիզնես արքսելերատորի շենքի շինարարության իրականացման համար շինարարական կազմակերպության ընտրություն և աշխատանքների մեկնարկ	«Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի շրջանակում Ինժեներական բիզնես արքսելերատորի շենքի շինարարության իրականացման համար շինարարական կազմակերպության առկայություն և աշխատանքների մեկնարկի ապահովում	Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի իրականացման ղեկավար հանձնաժողով (համաձայնությամբ) Մրցութային կարգով ընտրված կազմակերպություն (համաձայնությամբ)	2019 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Համաշխարհային բանկի «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիր» վարկային համաձայնագիր ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
11.	«Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի շրջանակում Ինժեներական բիզնես արքսելերատորի շենքի շինարարության իրականացում	«Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի շրջանակում Ինժեներական բիզնես արքսելերատորի շենքի շինարարական աշխատանքների իրականացման ապահովում	Մրցութային կարգով ընտրված կազմակերպություն	2020 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Համաշխարհային բանկի «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիր» վարկային համաձայնագիր ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ